ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Ուսուցման արդյունավետ մեթոդների և հնարների օգտագործումը մայրենի առարկայի տարրական դասընթացում

ԿԱԶՄԵՑ՝ Նվարդ Ալբերտի Բաղդասարյանը

ԴՊՐՈՑԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ Գեղիի միջնակարգ դպրոց

ՂԵԿԱՎԱՐ՝ Լուսինե Բալայան

ԿԱՊԱՆ № 2 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ ՊՈԱԿ

ԿԱՊԱՆ 2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԵՎ ՀՆԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՄԱՅՐԵՆԻ ԱՌԱՐԿԱՅԻ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ 9

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ 9

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱՍ 16

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 22

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 26

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Կրտսեր դպրոցի հիմնական նպատակը մարդու, բնության և հասարակության մասին գիտելիքների, դրանք կյանքում կիրառելու կարողությունների և հմտությունների, բարոյական և հոգևոր արժեքների յուրացման այնպիսի մակարդակի ապահովումն է, որն անհրաժեշտ է սովորողին ավագ դպրոցում կամ մասնագիտական հաստատությունում ուսումը շարունակելու, ինչպես նաև տարիքին համապատասխան աշխատանքային գործունեություն իրականացնելու համար»[1]:

Մայրենիի դասավանդման գործընթացը տարրական դպրոցում ներառում է երեք ոլորտ.

1. լեզվական գործունեություն՝ բանավոր և գրավոր խոսք, ընթերցանություն, ունկնդրում և այլն,
2. գրական ստեղծագործությունների ուսուցում,
3. մայրենի լեզվի համակարգը:

Երեխայի արժեհամակարգը ձևավորվում է նշված երեք ուղղություններով՝ այդ ոլորտներից յուրաքանչյուրի յուրացմամբ: Մայրենի լեզվի ուսուցման գործընթացում կրտսեր դպրոցականի արժեհամակարգի ձևավորումն իրականացվում՝ երեք ուղղությամբ՝ խոսքային գործունեության, գրական տեքստերի շուրջ աշխատանքների և տվյալ լեզվի համակարգի, գիտելիքների յուրացման, հմտությունների և կարողությունների ձևավորման և զարգացման գործընթացում:

Կրտսեր դպրոցականի արժեհամակարգի ձևավորումը խարսխվում է կրթության բովանդակության վրա, ասել է թե՝ իրականանում է ծրագրային նյութի ընձեռած հնարավորությունների շրջանակներում և այդ նյութի յուրացմանն ուղղված մեթոդների ու հնարների միջոցով ուսումնական գործընթացի սուբյեկտների ակտիվ փոխգործակցության պայմաններում: Ուսուցումը պետք է մշտապես լրացվի նաև գիտելիքների ընդլայնմանն ու խորացմանը և կրտսեր դպրոցականների բազմակողմանի գործունեության կազմակերպմանն ուղղված արտադասարանական աշխատանքով[2]: Ուրեմն սովորողների սոցիալականացման գործընթացն իր արտահայտությունն է գտնում ոչ միայն ուսուցման, այլև արտադասարանական

---

[1] Տե՛ս Հանրակրթության պետական կրթակարգ և Միջնակարգ կրթության պետական չափորոշիչ, Երևան, 2004, 41, էջ 9:

[2] Շչուկինա Գ. Ի., Մանկավարժություն, Երևան, 1969, էջ 300:

աշխատանքների գործընթացում: Քանի որ արտադասարանական աշխատանքի բազմապիսի ձևերի օգտագործումը հնարավորություն է տալիս ուսուցիչներին ապահովելու դաստիարակության և զարգացման փոխներգործությունը, որի շնորհիվ տեղի է ունենում երեխայի սոցիալականացման գործընթացը: Արտադասարանական աշխատանքի բազմապիսի տեխնոլոգիաների օգտագործումը հնարավորություն է տալիս ուսուցիչներին ապահովելու դաստիարակության ու ուսուցման փոխներգործությունը, որի շնորհիվ տեղի է ունենում անձնավորության զարգացումը ու ճանաչողական հետաքրքրության ձևավորումը: Արտադասարանական ընթերցանությունը պայմաններ է ստեղծում դպրոցականների բազմակողմանի գործունեության հետազոտական, գեղարվեստական, տեխնիկական և այլ կազմակերպման համար, որի ընթացքում կարող են զարգանալ երեխաների ոչ միայն ճանաչողական հետաքրքրությունները, այլև նրանց հակումները, ընդունակությունները:

Հանրակրթության նպատակը սովորողների մտավոր, հոգևոր և ֆիզիկական ընդունակությունների դրսևորման, դաստիարակության և զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծումն է: ՀՀ հանրակրթության պետական կրթակարգում սահմանված են տարրական դասարաններում մայրենի լեզվի ուսուցմանն առաջադրվող որակական պահանջները՝ ըստ գիտելիքների, կարողությունների, հմտությունների և արժեհամակարգի: «Մայրենի լեզու» ուսումնական առարկայի շրջանակներում կրտսեր դպրոցականը պետք է սահուն և գրագետ կարդա, հասկանա ընթերցածը, ծանոթ լինի դասական և արդի գեղարվեստական գրականության, բանահյուսության նյութերին, իմանա գրավոր և բանավոր ճիշտ արտահայտվել, բացատրել բառերի իմաստն ու նշանակությունը, կարողանա բարեկիրթ արտահայտվել, լսածը հասկանալ և ճտորեն վերարտադրել, հարցեր կազմել, շարադրել դրանց պատասխանները, իրավիճակին համապատասխան խոսք կառուցել, կարդացածի, լսածի, տեսածի վերաբերյալ մտքերը շարադրել, տարբեր իրավիճակներում կիրառել լեզվական կարողությունները, զարգացնել ստեղծագործական կարողություններով՝ հորինելով փոքրիկ պատմություններ, հեքիաթներ, բանաստեղծություններ[3]: Ասել է թե՝ մայրենի

[3] Հանրակրթական դպրոցի տնօրենի ուղեցույց: Կրթակարգ, Երևան, 2004, էջ 65-67:

լեզվի ուսուցման հայեցակարգում բացառիկ կարևորություն է տրվում սովորողի արժեհամակարգի ձևավորմանը, քանի որ ուսուցման ընթացքում ձևավորվում է հայ ազգային նկարագիրը՝ նպաստելով երեխաների մտքերի, զգացմունքների, ապրումների արտահայտմանը: Մայրենի լեզվի դասավանդումը տարրական դասարաններում ոչ միայն բուն լեզվական, այլև ճանաչողական արժեք ունեցող գիտելիքների հաղորդման հիմնական միջոց է: Լեզվական և գրական ճաշակի զարգացմանը զուգահեռ այն նաև ապահովում է բնության, մարդու և հասարակական կյանքի մասին տվյալ տարիքի ու կրթական մակարդակին համապատասխան գործնական ու մատչելի գիտելիքների ձեռքբերումը[4]:

Մայրենիի դասավանդումը հետապնդում է հետևյալ կոնկրետ խնդիրների լուծումը՝

- ✓ աշակերտների ճիշտ կարդալու, անգիր սովորելու ունակությունների զարգացում և ամրապնդում,
- ✓ աշակերտի ինքնուրույն մտածողության զարգացում,
- ✓ ինքնուրույն բանավոր և գրավոր խոսք կառուցելու կարողությունների զարգացում, լեզվաքերականական գիտելիքները խոսքի կառուցման ընթացքում կիրառելու հմտության ձևավորում,
- ✓ կարդացածը պատմելու, քննարկելու, տարբեր թեմաներով զրույցներ անցկացնելու. երկխոսություններ կառուցելու միջոցով բանավոր խոսքի զարգացում,
- ✓ շարադրությունների միջոցով կապակցված խոսք ստեղծելու կարողություն,
- ✓ տեքստի վրա կատարվող գործնական աշխատանքի միջոցով գրվածքի լեզվաոճական առանձնահատկությունները բացահայտելու կարողության զարգացում,
- ✓ տարբեր բնույթի (գեղարվեստական արձակ և չափածո, հրապարակախոսական, գիտական և այլն) տեքստերի լեզվաոճական վերլուծության միջոցով աշակերտների լեզվական ճաշակի և խոսքի մշակույթի զարգացում,
- ✓ աշակերտների բառապաշարի հարստացում,

[4] Հայոց լեզու և գրականություն: Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր, Երևան, 2006, էջ 5-6:

✓ ձևաբանության և շարահյուսության լեզվաքերականական գիտելիքների հիման վրա խոսքի և նրա միավորների վերլուծության կարողությունների ձևավորում ու զարգացում:

Մայրենի լեզվի ուսուցման խնդիրներն են՝

- սովորողի ինքնարտահայտման պահանջմունքի պահպանում ու զարգացում.
- լեզվամտածողության, լեզվազգացողության զարգացում.
- բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ խոսքի, հստակ արտահայտման,
- կարողությունների զարգացում. բառարաններից, հանրագիտարաններից, տեղեկատվական այլ աղբյուրներից,
- օգտվելու հմտության զարգացում,
- ստեղծագործական մտածողության, երևակայության զարգացում,
- վերլուծելու, համադրելու, հակադրելու հմտությունների զարգացում, լեզվական տարրական գիտելիքների յուրացում:

Մայրենի լեզուն ուղղված է՝ սովորողի ինքնաարտահայտմանը, ինքնադրսևորմանը, սեփական միտքը բանավոր և գրավոր ձևակերպելուն և արտահայտելուն, սովորողի ստեղծագործական մտքի զարգացմանը:

Մայրենի լեզվի ուսուցումը պետք է սովորողին հնարավորություն տա՝ անկաշկանդ և գրագետ, գրավոր և բանավոր արտահայտելու սեփական մտքերը, զգացմունքները, կառուցելու ճիշտ և փաստարկված խոսքը, զարգացնելու լեզվական-ստեղծագործական երևակայությունը:

Մայրենի լեզվի ուսուցման արդյունավետ մեթոդների ու հնարների հարցը բոլոր ժամանակներում էլ մեծ կարևորություն է ունեցել: Անվիճելի է, որ ժամանակակից պայմաններում երբեք չի կարելի ուսուցումը մեկնաբանել որպես սովորողների մեջ միայն գիտելիքների, կարողությունների և հմտությունների որոշակի համակարգի ձևավորում: Այժմ խնդիր է դրվում մայրենին աշակերտներին սովորեցնել ուսուցման արդյունավետ մեթոդներով ու հնարներով: Հենց դրանով էլ պայմանավորված է մեր թեմայի արդիականությունը:

Մեր ուսումնասիրության նպատակն է հետազոտել ուսուցման արդյունավետ հնարներն ու մեթոդները մայրենիի տարրական դասընթացում: Ուումնասիրության խնդիրներն են.

1. վերլուծել մայրենիի արդյունավետ ուսուցման *առանձնահատկությունները*,

2. ընդգծել ուսուցման արդի մեթոդների ու հնարների դերը մայրենիի դասընթացում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԵՎ ՀՆԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՄԱՅՐԵՆԻ ԱՌԱՐԿԱՅԻ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Իրենց հրապարակումներում ուսուցման արդյունավետ մեթոդներին ու հնարներին, մայրենի լեզվի ուսուցման հարցերին են անդրադարձել հայ մեթոդաբան-մանկավարժներից շատերը: Մայրենի լեզվի ուսուցման հարցը քննվել է երեք տեսանկյունով.

1. մայրենի լեզվի ուսուցման ընդօրինակման մեթոդ (ընտանիք, միջավայր, ուսուցիչ և այլ միջոցներ),
2. ընթերցանություն և դրա հետ կապված հարցեր,
3. քերականություն և դրա հետ կապված աշխատանքներ:

Տարրական դպրոցում, սովորողների տարիքային առանձնահատկություններով պայմանավորված՝ ուսուցումը զուգորդվում է այլ նպատակադրումների հետ, իսկ գործունեության հիմնական ձևը խաղն է: Միջին դպրոցում խաղային տարրերն իրենց տեղը զիջում են որոնողական և հետազոտական բնույթի աշխատանքներին: Մեծ ուշադրություն է դարձվում տեքստային աշխատանքներին, երբ սովորողը լեզվառճական ուսումնասիրություններ է կատարում: 5-6-րդ դասարաններում մայրենիի ուսուցումը տարրական դասարանների միասնացած դասընթացի բնականոն շարունակությունն է: Մայրենիի դասընթացի հիմնական նպատակադրումը աշակերտի բանավոր և գրավոր խոսքի հետագա զարգացումն է[5]:

Մայրենի լեզվի տարրական դասընթացն իրականացվում է երկու փուլով՝ լեզվական նախագիտելիքների ուսուցում և լեզվական տարրական գիտելիքների ուսուցում:

Տարրական դպրոցում քերականական գիտելիքների ուսուցման և դրանք կարողությունների ու հմտությունների վերլուծելու գործընթացն ունի կրտսեր դպրոցականների տարիքային և հոգեկան գործընթացների, իսկապես նաև հայոց լեզվի քերականության բովանդակության յուրահատկություններով պայմանավորված մանկավարժամեթոդական որոշակի առանձնահատկություններ, որոնց ճանաչումն ու հայոց լեզվի դասերի ժամանակ հաշվառումը չափազանց կարևոր է: «Լեզվի

[5] Տե՛ս Մայրենի: Ուսուցչի ձեռնարկ: 5-6-րդ դասարաններ, Երևան, 2011, էջ 3:

հասկացողություն ու լեզվի հմտություն, ահա լեզվի այն կողմերը, որոնց մեջ աշակերտները պիտի վարժվին լեզվի դասատվության միջնորդությամբ և ընդունակ դառնան»[6]:

Լեզվական նախագիտելիքների ուսուցման փուլում կարևորվում են այն հասկացությունների ուսուցումը և ունակությունների ձևավորումը, որոնք անհրաժեշտ են երեխաների խոսքի և մտածողության զարգացման, հասկանալով կարդալու և գրելու տարրական կարողությունների ձեռքբերման, լեզվամտածողության ձևավորման գործընթացում: Այս փուլում շտկվում են նախադպրոցական տարիքին հատուկ և վաղ կրտսեր դպրոցական տարիքում դեռես պահպանված խոսքային արատները, ընդարձակվում և զարգանում են սովորողների խոսքային գործունեության հիմքերը, լեզվամտածողությունը: Երեխաների մեջ ձևավորվում են հաղորդակցական տարրական կարողություններ, մայրենի լեզվի նկատմամբ սեր, հետաքրքրություն, նրա անաղարտության նկատմամբ հոգածություն, կատարելագործվում և զարգացնում են լեզվահաղորդակցական և մտահաղորդակցական ունակությունները: Աշխատանք է տարվում երեխաների բառապաշարի հարստացման և ակտիվացման, այն օտարաբանությունից, ժարգոններից և բարբառային բառերից մաքրելու ուղղությամբ: Երեխաները սովորում են ճիշտ կառուցել և խոսքում օգտագործել նախ՝ պարզ, ապա պարզ ընդարձակ նախադասություններ, ձևավորվում են բանավոր և գրավոր կապակցված խոսք կառուցելու տարրական կարողություններ, որոնք հող են նախապատրաստում լեզվական տարրական գիտելիքների յուրացման համար:

Ուսուցման այս փուլում երեխաները նաև ձեռք են բերում նախնական գիտելիքներ պատմության (որպես խոսքի ամենամեծ միավոր), նախադասության, բառի, վանկի, հնչյուն-տառի, ձայնավորի, բաղաձայնի մասին, սովորում են ճիշտ օգտագործել վերջակետը՝ նախադասության վերջում, մեծատառը՝ նախադասության, մարդկանց, քաղաքների անունների սկզբում, գործնականորեն ճանաչում, անվանում և գործածում են կետադրության և առոգանության հիմնական նշանները և այլն: Տարբերում են առարկա, գործողություն և հատկանիշ ցույց տվող բառերը, կարողանում են առարկաները խմբավորել ըստ ընդհանրացնող անունների:

[6] Տե՛ս Ա. Բահրաթյան, Քերականության աշխարհիկ լեզվի, Թիֆլիս, 1987, էջ 20:

Գործնականորեն տիրապետում են պարզ ուղղագրություն ունեցող այն բառերի գրությանը, որոնց նրանք հանդիպում են իրենց ընթերցած նյութերում:

Լեզվական նախնական գիտելիքների ձեռքբերման գործընթացում երեխաները չպետք է սերտեն քերականական կանոններ և սահմանումներ:

Ա. Տեր-Գրիգորյանը քերականության ուսուցման երկու շրջան է առանձնացնում կամ այդ գործընթացը բաժանում են երկու շրջանների՝

ա) լեզվական նախագիտելիքների ուսուցում,

բ) լեզվական տարրական գիտելիքների ուսուցում[7]:

Իր հերթին լեզվական գիտելիքների ուսուցման ողջ գործընթացն բաժանվում է մի քանի շրջանի, որոնց ընթացքում տարրական դպրոցի սովորողները ձեռք են բերում ծրագրով նախատեսված լեզվական գիտելիքներն ու կարողությունները: Լեզվի ուսուցման առաջին փուլում տրվում են լեզվական նախագիտելիքներ: Նախագիտելիքների ուսուցումը չի դիտարկվում իբրև համակարգված գիտական քերականույան (գիտության) ուսումնասիրում: Տարրական կրթության բոլոր տարիների ընթացքում քերականության ուսումնասիրումը լեզվի դասընթացի նպատակը չէ: Իր տարվա ուսումնական գործունեության ճանապարհը երեխան անցնում է քերականական գիտելիքների օգնությամբ, սակայն դրանք այնպիսի հնարներ են, այնպիսի միջոցներ, ոոոնք պիտի նպաստեն, խթանեն հայերեն գրավոր և բանավոր գրագետ խոսք կառուցելու կարողության ձևավորմանն ու զարգացմանը: Այսինքն՝ լեզվական նախնական գիտելիքների և քերականական տարրական գիտելիքների ձեռքբերման գործընթացը երեխայի լեզվամտածողության ձևավորման, գրագետ բանավոր և գրավոր խոսք կառուցելու ունակության զարգացման գործառույթ ունի: Ուսուցման այս փուլում ևս աշակերտն իրեն ծանոթ և հասկանալի մեթոդներով խոսքի, բնագրի ուսումնասիրման ճանապարհով, ուսուցչի օգնությամբ ծանոթանում է մայրենի լեզվի խոսքային կառույցներին և յուրացնում դրանք գործնականորեն (վարժությունների կատարման ճանապարհով) իմաստավորվում և կիրառում դրանց հիմքում ընկած սկզբունքներն ու կանոնները:

Լեզվական տարրական գիտելիքների ուսուցման փուլում իրականացվում է այն պարզ ու մատչելի լեզվական հասկացությունների յուրացումը, որոնք անհրաժեշտ են

[7] Տե՛ս Ա. Տեր-Գրիգորյան, Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1980, էջ 12:

երեխաներին՝ բանավոր և գրավոր գրագետ խոսք կառուցելու կարողության ձևավորման, լեզվամտածողության զարգացման համար։ Ուսուցման այս փուլում լեզվական հասկացությունները չեն ուսումնասիրվում գիտական-լեզվաբանական համակարգով. դրանք ուսումնասիրվում են՝ հիմք ընդունելով ուսուցման՝ պարզից դեպի բարդը, ծանոթից անծանոթը, դյուրինից՝ դժվարը տանող սկզբունքները՝ սակայն գիտականորեն ճիշտ, բայց մատչելի մեկնաբանություններով։ Չնայած այս փուլում աստիճանաբար ի հայտ են գալիս որոշ պարզ սահմանումներ, սակայն «ուր կարելի է, լեզվի կանոնները չպիտի տրվեն երեխաներին, այլ նրանք ուսուցչի առաջնորդությամբ իրենք պիտի գտնեն այդ կանոնները։ Նույնանման և համասեռ երևույթները միմյանց հետ բաղդատելով՝ ակնհանդիման կացուցանել և գտնել միակ ուղիղ ճանապարհը»։

Ուսուցման այս փուլում հիմնավոր աշխատանք է տարվում նաև ձեռք բերված լեզվական գիտելիքները կապակցված խոսքում օգտագործելու ուղղությամբ։ Այդ ընթացքում հիմնական ուշադրությունը բևեռվում է մենախոսություն կառուցելու կարողության ձևավորման վրա. նկարի շուրջ պատմություն հյուսել, ներկայացնել տեսածը, լսածը, պատմել կամ վերապատմել ապրածը, իր փորձը, ընթերցած ստեղծագործությունը, շարադրել ինչպես սեփական ապրումները, այնպես էլ ուսուցչի ընթերցածը (գրել փոխադրություն)։ Նշված կարողությունների մեջ լեզվական գիտելիքները հանդես են գալիս կարողությունների և ունակությունների մակարդակում. տարրական դպրոցում քերականության ուսուցման գործընթացից պետք է բացառել տեսական գիտելիքները։

Մայրենիի ծրագրին համապատասխան՝ ուսուցիչը ինքը պետք է ընտրի աշակերտների ինքնուրույն գործունեության համար առաջադրվող հանձնարարությունները՝ ելնելով աշակերտների անհատական առանձնահատկություններից։

Մայրենի լեզվի գրքերում, ընթերցարաններում տարբեր տեսակի նյութեր են կիրառված, որոնք ճանաչողական ու դաստիարակչական այլևայլ խնդիրներ ունեն, և ըստ այդմ՝ դրանք պիտի ուսումնասիրվեն դասերի ընթացքում։ Ուսուցիչը եթե ցանկանում է՝ իր պարապած լեզվի դասը լիարժեք և նպատակային լինի, կամա թե ակամա պիտի դիմի տարբեր գիտությունների տվյալների ու փաստերի

օգտագործմանը, որպեսզի դասը հետաքրքրական, ուսանելի ու դաստիարակչական դառնա թե՛ բովանդակության և թե՛ լեզվի տեսանկյունից: Այդ տարբեր գիտությունների ցանկը կարող է շատ ընդարձակ և համառոտ լինել, դրանից վերցված փաստերն ու տեղեկությունները սխեմատիկ և ծավալուն լինեն. այդ ամենը կախված է ուսուցչից, նրա գիտելիքների պաշարից, նրա մանկավարժական-մեթոդական վարպետությունից: Երբեմն նույն նյութի շուրջ մեկ ուսուցիչ կարող է շատ բան տալ աշակերտներին, հարստացնել նրանց մտավոր և լեզվական պաշարը, իսկ մեկ ուրիշը, ընդհակառակը, շատ քիչ բան տալ, որովհետև նա կարող է տալ միայն այն և այնքանով, ինչքան որ նա ունի, կամ որքանով որ կարողանում է նա իր ունեցածը աշակերտներին հասցնել: Այստեղ կարևոր է այն հանգամանքը, որ մայրենի լեզուն տարրական դասարաններում ներառում է կամ ընդհանրացնում, իրենով ներկայացնում աշխարհաճանաչողական գիտելիքների ամբողջ համակարգը, և ուսուցիչը այդ հանգամանքը պետք է նկատի ունենա և իրականացնի իր աշխատանքի ընթացքում՝ կիրառելով բոլոր այն աշխարհաճանաչողական գիտելիքների իր իմացած տվյալները, որոնք անհրաժեշտ կլինեն նյութերի ուսումնասիրման ընթացքում:

Ուսումնական գործունեությունը, ի տարբերություն խաղի, «բնությունից» տրված չէ երեխային, ուսուցիչները և ծնողներն են, որոնք սովորեցնում են երեխային սովորել, և շատ կարևոր է, որ նրանք քաջ գիտակցեն այս հանգամանքը, կարողանան ուղղել երեխայի ճանաչողական պահանջմունքը դեպի ուսումնական առարկաները, սովորեցնեն երեխաներին ուսումնական խնդիրներ առաջադրել և լուծել: Այս գործում ահռելի դեր է խաղում խրախուսանքը. պետք է խրախուսել երեխայի ցանկացած հաջողություն, իսկ անհաջողությունների դեպքում՝ ոչ թե վրիրավորել երեխային, ներշնչել, որ նա հիմար է, այլ բացատրել, որ սխալներն անխուսափելի են և ժամանակի ընթացքում անպայման կվերանան:

Ուսումնական գործունեությունը փոխում է երեխայի զգացմունքների բովանդակությունը, նրանք դառնում են ավելի գիտակցված և զսպված: Դրական զգացողություններն առաջանում են որ միայն հաճելի խաղալիս և հաճույք ստանալիս, այլ որոշակի մտավոր գործունեություն կատարելիս, դժվարություններ հաղթահարելիս, նաև մրցակցությունից: Երեխան ծանոթանում է կյանքի տարբեր

սոցիալական դերերի, նրա մոտ զարգանում են բարոյական զգացմունքները: Տեղի է ունենում առկա բարոյական նորմերի, կանոնների ինտենսիվ ներքնայնացնում: Այս գործընթացում կարևորվում է մեծահասակի դերը, որը կարող է ներկայացնել երեխային ընդունելի վարքաձևեր, նորմեր, կանոններ, զարգացնել բարոյական ինքնագիտակցությունը: 8-9 տարեկանում ի հայտ է գալիս զգացմունքների տարբերակում. վատն ու լավը փոխարինվում են տարբեր զգացմունքների գիտակցմամբ և արտահայտմամբ: Զարգանում են ինտելեկտուալ զգացմունքները՝ հետաքրքրությունը, զարմանքը, կասկածը, ճանաչման հաճույքը և այլն:

Տարրական դպրոցում լեզվի լեզվի ուսուցման նպատակների համապատասխանությունը իր արտացոլումն է գտնում կրթության բովանդակությանը ներկայացվող պահանջներում: Տարրական դպրոցում լեզուների ուսուցումն ուղղված է հետևյալ հիմնական նպատակների իրականացմանը.

- կրտսեր դպրոցականների իմացության զարգացում, մայրենի լեզվի վերաբերյալ գիտելիքների, ունակությունների, հմտությունների, դրանց օրինաչափությունների ու փաստերի վերլուծության և ընդհանրացման փորձի ձևավորում,
- կրտսեր դպրոցականի խոսքի զարգացում, նրանց մեջ խոսքային գործունեության հիմնական տեսակների ձևավորում, խոսքային հաղորդակցման մշակույթի դաստիարակում,
- կրտսեր դպրոցականների գեղագիտական ճաշակի ձևավորում:

Մայրենիի ուսուցման գործընթացում կրտսեր դպրոցականների արժեքային համակարգի ձևավորմանը նպաստում են հատկապես գործնական առաջադրանքները, որոնց կատարման ընթացքում երեխաները դրսևորում են ձեռք բերած գիտելիքները, այսինքն՝ վարժության կամ առաջադրանքի կատարումը ենթադրում է մտավոր ու գործնական կողմերի կիրառում: Բանավոր վարժությունները զարգացնում են երեխայի հիշողությունը, խոսքը, ճիշտ հնչերանգը, բանավոր վարժությունները կենտրոնացնում են ուշադրությունը, բառօգտագործման, քերականական գրագիտության հմտությունները և այլն: Մարզողական, վերլուծական, կիրառական, ստեղծագործական և այլ տեսակի վարժությունները երեխայի մտքերն արտահայտելու, խմբավորելու, ամբողջացնելու

հանձնարարություններ են, որոնք կատարվում են բնագրերի շուրջ: Արդյունքում յուրացված գիտելիքը ստեղծագործաբար կիրառվում է՝ նպաստելով գնահատողական վերաբերմունքի, համոզմունքների ձևավորմանը, հույզերի, երևակայությանը արտացոլմանը:

Մայրենիի ուսուցման գործընթացում յուրացվում են հետևյալ արժեքները՝

- գեղագիտական՝ խոսքի գեղեցկության և ներդաշնակության ընկալում,գեղագիտական հույզերի և ապրումների դրսևորում, գեղագիտական ճաշակի ձևավորում,
- բարոյական՝ մարդկանց և շրջապատող աշխարհի փոխհարաբերությունների, երևույթների ու իրադարձությունների համարժեք ընկալում:

Կրտսեր դպրոցականների զարգացման իմացական-ճանաչողական և հաղորդակցական գործունեությունը խթանում է նրանց իմացական ու սոցիալական արժեքների ձևավորումը, իսկ բարոյական և գեղագիտական արժեքները հիմնականում ձևավորվում են ընթերցանության համար նախատեսված գեղարվեստական նյութերի, տարբեր բնագրերի ուսուցման և ուսումնասիրման ընթացքում[8]: Մայրենի լեզվի դասը ինտեգրվում է գեղարվեստական ընթերցանության դասի հետ: Կրտսեր դպրոցականների պատկերավոր մտածողության և հուզական ընկալման շնորհիվ գեղարվեստական տեքստերի բովանդակության ներգործությունը կրտսեր դպրոցականի ներաշխարհի վրա պետք է համարժեք լինի քերականական առաջադրանքների կատարմանը:

[8]Люблинская А.А., Детская психология. - М., 1971, с. 399, Божович, Л.И. Личность и ее формирование в детском возрасте, СПб., 2008, 193.

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱՍ

ԴԱՍԻ ՀԻՆ ԹԵՄԱՆ՝ «ՆՇԱՆԱՎՈՐ ՈՉԻՆՉԸ»

ԴԱՍԻ ՆՈՐ ԹԵՄԱՆ՝ «ՈՒԺԻ ԱԿՈՒՆՔԸ»

ԴԱՍԱՐԱՆ -3-ՐԴ

ԱՌԱՐԿԱՆ –«ՄԱՅՐԵՆԻ»

ԴԱՍԻ ՏԵՍԱԿԸ –Համակցված դաս

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ -1 դասաժամ

Դասի նպատակները

- ✓ ամրակայել զրույցը հասկանալով և արտահայտիչ կարդալու կարողությունը,
- ✓ զարգացնել զրույցը վերուծելու կարողությունը կարողությունը՝

հետաքրքրություն ստեղծելով դեպի արծարծված թեման,

- ✓ ուշադրություն բևեռել նշված զրույցի արծարծած գլխավոր գաղափարի վրա,
- ✓ ուսուցանել նոր բառեր, կապակցություններ,
- ✓ սովորել առածներ:

ԴԱՍԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- զարգացնել սովորողների վարժ և արտահայտիչ, հասկանալով կարդալու

կարողությունները,

- համալրել սովորողների բառապաշարը,
- զարգացնել նախադասություններ կազմելու, սեփական մտքերը ճշգրտորեն

արտահայտելու հմտությունները:

ՄԵԹՈԴՆԵՐԸ

Համագործակցային, փոխներգործուն /ինտերակտիվ/ մեթոդներ՝ մտագրոհ, պրոբլեմային հարց, խմբային աշխատանք, 5-րոպեանոց շարադրություն և այլն:

Անհրաժեշտ պարագաներ

Դասագիրք, հոմանիշների քարտ-բառեր, ուսումնաօժանդակ այլ նյութեր:

Դասի ընթացքը՝ ԽԻԿ համակարգով

Կազմակերպման փուլ (2-3 րոպե)

1. **Խթանման փուլ** (4-6 րոպե)

ա. Դասի օրվա թեման՝ «Նշանավոր ոչինչը»: Անցկացվում է մարդկային հատկանիշների, մարդկային արարքի, կյանքի անցողիկության վերաբերյալ զրույց՝ հարց ու պատասխանի միջոցով: Կարևորվում են մարդկային լավ արարքները, մասնավորապես համեստությունը: Այնուհետև անցում է կատարվում զրույցի ընթերցմանը: Աշակերտները ընթերցում են զրույցը հատվածաբար, դերերով, իրար շարունակելով:



Զրույցի առաջին հատվածում ընդգծվում է Խիկարի և գյուղապետի զրույցը. հանկարծակի հիվանդացած մայրը ջուր է ուզում, սակայն երաշտ է: Աշակերտները ընդգծում են, որ գյուղապետը սնապարծ է, իր պաշտոնը կուրացրել է նրան: Նա զարմանում է և զայրանում, որ Խիկարը իրեն տեսնելիս ոտքի չի կանգնել: Նախատում է նրան: Յուրաքանչյուր դրվագ կարդալիս աշակերտները վերլուծում են նշված դրվագում արտահայտված գաղափարը: Ավարտելուց հետո «Մտագրոհ» մեթոդի օգնությամբ ուսուցիչը հանձնարարում է նշել գլխավոր հերոսներին՝ Խիկարին և գյուղապետին բնորոշ հատկանիշները: Հակադրության հիմքով աշակերտները բացատրում են Խիկարի և գյուղապետի տարբերությունները:

Աշակերտները բացատրում են ընդգծված բառերի /վեր կենալ, աչքից կորել, նահանգապետ, իշխան, բարկանալ, ստվեր, գյուղապետ, թագավոր/ իմաստները, ուսուցիչը թելադրում է, նշված բառերը գրում են գրատախտակին: Այնուհետև յուրաքանչյուր բառով կազմվում է նախադասություն:

Խորանարդման մեթոդով ուսուցիչը կազմում է առաջադրանք: Խորանարդի ամեն անկյունում գրված են հարցեր, օրինակ՝

1. Ո՞վ էր Խիկարի զրուցակիցը:
2. Ինչո՞ւ գյուղապետը զարմացավ, երբ Խիկարը ոտքի չկանգնեց նրան տեսնելիս:
3. Ինչո՞ւ զայրացավ գյուղապետը:

4. Ո՞րն է տեքստի գլխավոր գաղափարը:

Ուսուցիչը համագործակցային մեթոդով կազմակերպում է խմբային աշխատանք: Դասարանը բաժանվում է երեք խմբի: Առաջին խումբը «Նշանավոր ոչինչը» տեքստից դուրս է բերում առարկա և անձ, երկրորդ խումբը՝ առարկայի հատկանիշ, երրորդ խումբը՝ գործողություն ցույց տվող բառերը: Դրանցով աշակերտները պետք է կազմեն պարզ համառոտ և պարզ ընդարձակ նախադասություններ, ինչպես օրինակ՝

Առարկա, անձ ցույց տվող բառեր՝ ծառ, գյուղապետ, ստվեր

<u>նախադասություններ</u>

Ես սիրում եմ ծառի տակ նստել:

Անահիտը կանգնեց ստվերում, որ չտեսնեն նրան:

Մեր գյուղապետը բարի մարդ է:

Առանց ջրի՝ ծառերն ու ծաղիկները կչորանան:

Գործողություն ցույց տվող բառեր՝ դիմել, պատասխանել, հոգնել

<u>նախադասություններ</u>

Ես օգնության խնդրանքով դիմեցի Արմենին:

Անահիտը շատ լավ պատասխանեց դասը:

Ես հոգնեցի երկար քայլելուց:

բ. Ֆիզկուլտ դադար -Բառախաղ- բառի առաջին տառի փոփոխությամբ աշակերտները կազմում են հատկանիշ ցույց տվող բառեր, որոնք մարդկային հատկանիշների որակումներ են /բարեհոգի, գեղեցիկ, բարի, չար և այլն/:

Աշակերտները խաթարված հերթականության մեթոդով գրատախտակին կազմում են առած՝

Սարն ինչքան էլ բարձր լինի, վրայով մի օր ճամփա կանցնի:

Նրանք բացատրում են առածի իմաստը, որ պաշտոնը չպետք է գոռոզացնի մարդուն, մի օր նա կարող է այդ պաշտոնը չզբաղեցնել: Մարդկային հատկանիշները չպետք է պայմանավորված լինեն մարդու դիրքով և պաշտոնով:

2. **Իմաստի ընկալման փուլ (25 րոպե)**

Նոր նյութի հաղորդումը կատարվում է մտագրոհ մեթոդով: Գուրգեն Գաբրիելյանի «Ուժի ակունքը» ստեղծագործության միջոցով ուսուցիչը պետք է աշակերտներին բացատրի միասնության ուժն ու զորությունը: Աշակերտներին

հարցեր են ուղղում՝ արդյոք մի ձեռքը կարող է ծափ տալ, մի մարդն է ուժեղ, թե մի քանիսը, ինչո՞ւ է ժողովուրդն ասում՝ «Գյուղը կանգնի, գերան կկոտրի»: Պրոբլեմային հարցեր են առաջադրվում: Աշակերտները պետք է ընկալեն, որ միասնությունը ուժ է: Այնուհետև ուսուցիչը կարդում է ստեղծագործությունը և հատվածաբար ներկայացնում բանաստեղծության բովանդակությունը:

Մեջբերվում են ասացվածքներ.

1. Ուս ուսի տանք, սարեր շուռ կտանք:
2. Միասնությունը ուժ է:
3. Մի ձեռքը ծափ չի տա:

«Մտքերի քարտեզագրում» մեթոդի օգնությամբ ընդգծվում են ստեղծագործության գեղարվեստական այն պատկերները, որոնք միասնություն են խորհրդանշում:



1. Ծաղիկը ծաղկի հետ ծաղկեփունջ կկազմի:
2. Քարը քարի դնենք՝ շենք ու կամուրջ է:

3. Կեչին կեչու հետ անտառ է:
4. Առուն առվի հետ գետ է կարկաչուն:
5. Տառը տառի հետ իմաստ է ու բառ:
6. Ուսը ուսին անսպառ ուժ է:

Ուսուցիչը բացատրում է նշված պատկերների իմաստները:

Ինտերակտիվ մեթոդների օգնությամբ կազմակերպվում է խմբային աշխատանք:

Խմբային աշխատանք՝ համագործակցային մեթոդներով

Նոր ներմուծված բառերի արապնդման համար դասարանը բաժանվում է խմբերի: Յուրքանչյուր խմբի տրվում է տեսքտ, որից սովորողները պետք է առանձնացնեն նախորդ դասին սովորած բառերը՝ նշելով դրանց իմաստները: Համակցված դասի ընթացքում ուսուցիչը ուշադրություն պետք է դարձնի նաև նոր դասի բառերին և հանձնարարի աշակերտներին կազմել բառակապակցություններ ու նախադասություններ «շառաչուն», «ժպտուն», «փայլուն», «դիմացկուն» բառերով: Առաջադրանքների կատարումներից հետո գրատախտակին լրացվում է հետազոտական աղյուսակը:

Խմբային աշխատանք 2.

Աշակերտները պետք է կարդան բանաստեղծությունը և ըստ արտահայտված գաղափարի՝ պատասխանեն հետևյալ հացերին:

1. Ի՞նչ է անում ժողովուրդը, ի՞նչ են անում մարդիկ:
2. Ի՞նչ է անում զորքը, ի՞նչ են անում զինվորները:
3. Ի՞նչ է անում անտառը, ի՞նչ են անում ծառերը:

Խմբային աշխատանք 3.

Պատմի՛ր մի դեպք, երբ օգնել ես ընկերներիցդ որևէ մեկին:

Աշխատանքի ավարտից հետո յուրաքանչյուրը պետք է ներկայացնի իր աշխատանքը:

3.Կշռադատման փուլ - 4-6 րոպե

Գնահատում և անդրադարձ (2 -3 րոպե):

Հարցերի միջոցով ուսուցիչը պետք է պարզի դասի թերություններն ու առավելությունները: Գնահատումը պետք է կատարել ըստ խմբային և անհատական ցուցանիշների:

Ամբողջ դասի ընթացքում համեմատություններ են անցկացվում անցած և նոր դասերի միջև, և ամբողջացվում են գիտելիքները:

Տնային առաջադրանք՝ անգիր սովորել «Ուժի ակունքը» բանաստեղծությունը:

Համակցված դասի արդյունքում աշակերտները կկարողանան.

• պատկերացում կազմել և արժևորել մարդկային կարևորագույն հատկանիշները, կհասկանան, որ միասնությունը ուժ է, բարեհոգի, արդար ու գթասիրտ լինելը՝ անհրաժեշտություն,

• կկարողանան ընթերցել ստեղծագործությունները՝ վերլուծաբար մեկնաբանելով ընթերցած հատվածներում արտացոլված գաղափարները,

• կհամալրեն իրենց բառապաշարը, կկարողանան բացատրել նոր բառերի իմաստները, նրանցով կկազմեն պարզ համառոտ և ընդարձակ նախադասություններ:

Այսպիսով՝ տարրական դասարաններում դրվում են բոլոր գիտելիքների և կարողությունների հիմքերը, երեխաներն աստիճանաբար հաղորդակից են դառնում մարդկության ստեղծած արժեքներին, բնության գաղտնիքներին, հարստանում է նրանց խոսքն ու մտածողությունը, և նրանք զարգանում են: Երեխաների ընդհանուր զարգացումն ապահովելու համար նրանց ոչ միայն պիտի գրելո, կարդալու և խոսելու հմտություններ սովորեցնել, այլև տալ բազմապիսի աշխարհաճանաչողական տեղեկություններ, սովորեցնել շրջապատում գնահատել լավն ու գեղեցիկը, լավն ու բարին՝ անընդհատ հարստացնել աշակերտի ստացած գիտելիքները, համալրել դրանք, շրջանառության մեջ պահել սովորածը, շաղկապել դրանք այնպես, որ գիտելիքները կապվեն միմյանց հետ: Գիտելիքների միավորման և համադրման գործընթացը լայն հեռանկար է բացում ոչ միայն մանկավարժական գործընթացի, այլ դրա իրականացման ձևերի և մեթոդների կատարելագործման համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Գիրքը, գրատախտակը, կավիճը, առաջադրանքներով քարտերը, թղթե պաստառները մանկավարժության տարրեր են, որոնք համարվում են լավագույն հին տեխնոլոգիաներ: Նոր սերունդը, որը մեծացել է հեռուստացույցների, համակարգիչների և հեռախոսներ ժամանակաշրջանում, ունի ավելի մեծ տեսողական հիշողություն և ուսուցչից պահանջում է ուրիշ մոտեցումներ: Ցանկացած մանկավարժ գիտակցում է, որ ժամանակակից մեթոդները, հնարները, նաև նոր տեղեկատվական տեխնոլոգիաները ունեն մեծ ազդեցություն կրթության բնագավառում.

1. ընդլայնվում են տեղեկատվություն փնտրելու և գտնելու հնարավորությունները, ինչը նշանակում է ավելի մանրակրկիտ յուրացնել այս կամ այն նյութը,

2. լայն հնարավորություններ են տալիս մանկավարժին աշակերտին սովորեցնելու ինքնուրույն աշխատել ոչ ավանդական մեթոդով, փնտրել այս կամ այն խնդրի լուծումը,

3. հնարավորություն է տալիս տարաբնույթ աշխատելու, արագ և ճիշտ ձևով վերահսկելու աշակերտին, ինչը հնարավորություն է տալիս դասը կազմակերպելու այնպես, որ ցանկացած աշակերտ դասը յուրացնի,

4. տարբեր համակարգչային գործոնների միջոցով ակտիվացնելու աշակերտի իմացական հետաքրքրությունները,

5. բացատրական աշխատանքից անցնելու գործնականի, որի ընթացում աշակերտն է գործունեության ակտիվ օբյեկտը,

6. զարգացնելու աշակերտների ճիշտ դրսևորումը շրջապատում, տվյալ նյութի հետ ճիշտ աշխատելը, որը ներառում է տվյալ նյութի փնտրում, վերարտադրում և պահպանում, անցկացնել դասը բարձր էսթետիկ համակարգով:

Լեզվի սովորումը ենթադրում է յուրաքանչյուր բառի, արտահայտության, մտքի և խոսքի գիտակցված սովորում, կառուցում և շարադրում[9]: Այս առումով ՏՀՏ օգտագործումը որակապես կփոխի նաև մայրենի ուսուցչի դերը. ուսուցիչը կդառնա ոչ միայն և ոչ այնքան գիտելիք հաղորդող, որքան սովորողի կրթական գործը

[9] Dorsch M. Second Language Acquisition vs. Second Language Learning. Germany: Grin Verlag, 2011, p.7.

կազմակերպող, նրա հետ ուսումնական նյութը ընտրող, նրան օժանդակող և գնահատող գործընկեր: Հետևաբար վերապատրաստման դասընթացներ կազմակերպելիս պետք է կարևորվի ուսուցիչների համակարգչային գիտելիքների և հմտությունների զարգացումը և կարծրացած մոտեցումների և հոգեբանական բարդույթների հաղթահարումը: Ինչպես նշում է Հ. Հ. Պետրոսյանը, «մանկավարժական գործունեության բնագավառում մասնագետների գործունեության մեջ առանձնացվում են մասնագիտական կոմպետենտության հետևյալ բաղադրիչները՝ նախագծային և պլանավորման, ուսումնական, դաստիարակչական, մեթոդական, տեխնոլոգիական, արժևորվման և գնահատման, կազմակերպչական, կառավարչական, գիտահետազոտական»[10]:

Հատկանշական է այն, որ համարյա բոլոր ուսուցիչները, ունենալով համակարգիչ, հստակորեն չեն պատկերացնում տեղեկատվական կոմպետենցիայի դերը: Ռ. Պ. Միլրուդը ավելի է առաջ գնում և ներմուծում է տեղեկատվական-մանկավարժական կոմպետենցիա հասկացությունը, որը ներառում է թվային, ռեսուրսային և տեխնոլոգիական բաղադրիչները[11]:

Տեղեկատվական-մանկավարժական կոմպետենցիայի թվային բաղադրիչը միավորում է համակարգչի և համացանցի մասին ուսուցչի գիտելիքները: Ռեսուրսային բաղադրիչը նշանակում է անհրաժեշտ տեղեկատվությունը գտնելու և օգտագործելու կարողություն, իսկ տեխնոլոգիական բաղադրիչը ենթադրում է, որ ուսուցիչը պետք է կարողանա ոչ միայն օգտվել համակարգչից և համացանցից, այլև դրանց միջոցով մշակել տեղեկատվությունը: Ուսուցիչը պետք է կարողանա ներկայացնել, հրատարակել տեղեկատվությունը, համակարգչի միջոցով մշակել, օգտվել էլեկտրոնային տեղեկատվական աղբյուրներից, բառարաններից, տեղեկատուներից, ուղեցույցներից, ուսուցողական կայքերից և ծրագրերից և այլն: Միայն համակարգչից օգտվելու կարողությունները բավական չեն համապատասխան լեզվաբանական, հաղորդակցական, մեթոդական կոմպետենցիա ձևավորելու համար: Մայրենիի ուսուցիչը պետք է կարողանա ստեղծել իր սեփական մեթոդական նյութերը և անգամ դրանք զետեղել համացանցում: Առանցքային նշանակություն ունի

[10] Պետրոսյան Հ. Հ., Կոմպետենտային մոտեցումը և մասնագիտական կրթության որակի ապահովումը, Ե., 2013, էջ 7:

[11] Люботинский А. А., Структурно-функциональная модель методической компетентности будущих учителей иностранного языка в условиях инновационной 142 образовательной среды, 2014, №8, с. 39-47.

նշված մոտեցման մեջ ստեղծագործական կոմպետենցիան, որը վերաբերում է տարբեր մեթոդական խնդիրներ լուծելիս ստեղծագործական ունակությունների դրսևորմանը: Ըստ մայրենիի ուսուցչի մեթոդական կոմպետենտության բաղադրիչների՝ առանձնացվել են այն կարողությունները, որոնք անհրաժեշտ են համապատասխան գործունեություն ծավալելու համար: Ակնհայտ է, որ միայն հաղորդակցական, լեզվամշակութային կոմպետենտություն ձևավորելով՝ հնարավոր չէ մասնագիտական-մանկավարժական գործունեություն ծավալել: Մեթոդական և մասնագիտական կոմպետենտությունների հարաբերակցությունը որոշելիս պարզվում է, որ առաջինը վերջինիս կարևորագույն բաղադրիչն է և հնարավոր չէ զարգացնել մեկը, առանց զարգացնելու մյուսը:

Այսպիսով, մայրենիի ուսուցիչը, ժամանակակից մեթոդների ու հնարների հնարավորությունները ճիշտ օգտագործելով, դպրոցում.

1. ապահովում է կրթության դրական շարժառիթ, ակտիվացնում սովորողների իմացական գործունեությունը,

2. դասերը անցկացնում է էսթետիկ և էմոցիոնալ մակարդակով՝ ապահովում է պատկերավորությունը և օգտագործելով տարբեր քանակի նյութեր,

3. ընդլայնում է սովորողի ինքնուրույն գործելու հնարավորությունը և այլն:

Համակարգիչը, պրոեկտորը և ինտերակտիվ գրատախտակը կարելի է օգտագործել ինչպես.

անհատական կրթության միջոց,

1. կրթական նյութի կազմակերպման միջոց, ակնթարթորեն գնահատել աշակերտի հաջողությունների և ստացած տեղեկատվությունը,

2. ինտերակտիվ գրատախտակը դասի յուրաքանչյուր պահին օգտագործվում է նոր նյութի բացատրման կրկնման և միավորման համար:

ՏՀՏ կիրառումը մայրենիի դասերին թույլ է տալիս.

1. սովորողների մոտ զարգացնել կարողություն կողմնորոշվել շրջապատող միջավայրի տեղեկատվական հոսքերի մեջ,

2. տիրապետել տեղեկատվության հետ աշխատանքի գործնական միջոցներին,

3. զարգացնել կարողություններ, որոնք թույլ կտան փոխանակվել տեղեկատվությամբ ժամանակակից տեխնիկական միջոցների օգնությամբ,

4. բարձրացնել սովորողների ճանաչողական ակտիվությունը,

5. անցկացնել դասեր բարոյախրատական բարձր մակարդակով, աշակերտներին մոտենալ անհատական՝ կիրառելով բազմապիսի առաջադրանքներ:

Պրեզենտացիաների կիրառումը պարզապես անփոխարինելի է դասերի ժամանակ: Նյութը, որը ավանդական ձևով դժվար է ընկալվում էլեկտրոնային առաջադրանքների միջոցով, երեխաների մոտ բացահայտում է հետաքրքրություն առարկայի հանդեպ, և խորանում են գիտելիքները: Այդ դասերի արդյունավետությունը բարձր է: Համակարգիչը ձևավորում է նյութի ռացիոնալ հիշելու ընդունակությունները: Կրտսեր դպրոցականների համար հեշտ է հիշել դժվար նյութը սխեմաների և աղյուսակների միջոցով, որտեղ կրճատ և տեսանելիորեն երևում է ուսումնասիրվող նյութը: Ինտերակտիվ գրատախտակը թույլ է տալիս բավականաչափ ընդլայնել նյութի բացատրման հնարավորությունները: Ուսուցման համակարգչային տեխնոլոգիաները հավաքագրման, վերամշակման, պահպանման և տեղեկատվության փոխանցման գործընթացներ են սովորողի համար[12]:

Այսպիսով՝ մեթոդներն ու հնարները թույլ են տալիս մայրենի դասավանդող ուսուցչին բավականաչափ ընդլայնել տարբեր տիպի տեղեկատվության ներկայացման հնարավորությունը: Դիդակտիկ ճիշտ մոտեցման ժամանակ մեթոդը, հնարը, համակարգիչը ակտիվացնում են սովորողների ուշադրությունը, ուժեղացնում է մոտիվացիան, զարգացնում ճանաչողական գործընթացները, մտածելակերպը, ուշադրությունը, զարգացնում է մտահորիզոնը և պատկերացումները:

[12] Rashid, M. Educational Technology: National Book Foundation; Islamabad, 1998, p.17-18.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Բահրաթյան Ա., Քերականության աշխարհիկ լեզվի, Թիֆլիս, 1987։
2. Հայոց լեզու և գրականություն։ Հիանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր, Երևան, 2006։
3. Հանրակրթական դպրոցի տնօրենի ուղեցույց։ Կրթակարգ, Երևան, 2004։
4. Հանրակրթության պետական կրթակարգ և Միջնակարգ կրթության պետական չափորոշիչ, Երևան, 2004։
5. Մայրենի։ Ուսուցչի ձեռնարկ։ 5-6-րդ դասարաններ, Երևան, 2011։
6. Շչուկինա Գ. Ի., Մանկավարժություն, Երևան, 1969։
7. Պետրոսյան Հ. Հ., Կոմպետենտային մոտեցումը և մասնագիտական կրթության որակի ապահովումը, Ե., 2013։
8. Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1980։
9. Божович, Л.И. Личность и ее формирование в детском возрасте, СПб., 2008.
10. Люблинская А.А., Детская психология. - М., 1971.
11. Люботинский А. А., Структурно-функциональная модель методической компетентности будущих учителей иностранного языка в условиях инновационной 142 образовательной среды, 2014, №8.
12. Dorsch M., Second Language Acquisition vs. Second Language Learning. Germany: Grin Verlag, 2011.
13. Rashid, M., Educational Technology: National Book Foundation; Islamabad, 1998.